«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ	««Մտավոր հետամնացություն ունեցող երեխաներ ծնողների հետ իրականացվող աշխատանքներ»»
ԱՌԱՐԿԱ	Մաթեմատիկա
ՀԵՂԻՆԱԿ	Գրիգորյան Արմինե Սանասարի
ՄԱՐԶ	Արմավիր
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	Խ. Աբովյանի անվան թիվ 4 հիմն. դպրոց

Հետազոտության արդիականությունը: Պետք է նշել, որ ողջ աշխարհում այսօր մեծանում է մտավոր հետամնացություն ունեցող երեխաների թիվը: Դա պայմանավորված է աշխարհում տիրող սոցիալ-քաղաքական, տնտեսական և բնական աղետների գործոններով: Այդ իմաստով մեր հանրապետությունը նույնպես զերծ չէ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թվաքանակի աճից:

Անդրադարձել ենք այս թեմային, քանի որ մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնողները՝ կապված իրենց երեխայի վիճակի հետ, հաճախ հանդիպում են հասարակության իրարամերժ բացատրությունների և վերաբերմունքի և ընտանիքն էլ հանդիսանալով հասարակության կարևորագույն օղակներից մեկը, դիտվում է որպես հատուկ տիպի կոլեկտիվ, որը դաստիարակության մեջ խաղում է հիմնական, երկարատև և կարևորագույն դեր:

Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնողների հետ իրականացվող մանկավարժական աշխատանքներին անդրադարձել են նաև մի շարք հեղինակներ (Мастюкова, Е. М., 2003, Маллер. А. Р, 2003, Акатов, Л. И.,2004, 3 Жихорева, М. В,2006 և այլք):

Այսպիսով՝ մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների, նրանց ծնողների վերաբերմունքի, անձնային գծերի ուսումնասիրությունը արդիական է մտավոր հետամնացություն ունեցող երեխաների կրթության, սոցիալականացման, հարմարվողականության, վերականգման համար: Այա ամենն էլ հիմք է հանդիսացել մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնողների հետ համապատասխան մանկավարժական աշխատանքների կազմակերպմանն ու իրականացմանը:

Հետազոտության նպատակը՝ մշակել մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնողների հետ անցկացվող մանկավարժական աշխատանքների բովանդակությունը:

Մագիստրոսական աշխատանքի ներածությունն իր մեջ ներառում է նաև **հետազոտության օբյեկտը, հետազոտության առարկան**, **վարկածը,** որոնք ներառված են սլայդում, ինչպես նաև մեր կողմից պատրաստված բուկլետներում::

Առաջադրվեցին հետևյալ խնդիրները:

1) վերլուծել ուսումնասիրվող հիմանախնդրի վերաբերյալ գիտամեթոդական գրականությունը:

2) ուսումնասիրել մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնողների հետ իրականացվող մանկավարժական աշխատանքների ժամանակակից տեխնոլոգիաները:

3) մշակել մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնողների հետ իրականացվող աշխատանքների բովանդակությունը և փորձարարական ճանապարհով հիմնավորել դրանց արդյունավետությունը:

Հետազոտական մեթոդաբանական հիմք են հանդիսացել Լ.Ս. Վիգոտսկու, Ա. Ադլերի, Է. Գ. Յուդինի, Վ. Վ. Դավիդովի, Գ. Մ. Դուլնեվի, Մ. Ս. Պեվզների, Ֆ. Գ. Պեռովայի տեսությունները:

Հետազոտության ընթացքում կիրառվել են **ժամանակակից մեթոդները:**

Պաշտպանության ներկայացվող հիմանական դրույթներն են.

1) մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնողների հետ իրականացվող աշխատանքներն ունեն մի շարք բացթողումներ և կատարելագործման կարիք:

2) առաջարկված միջոցները և հատուկ պայմանները նպաստում են մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնողների հետ իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացմանը ընտանիքի պայմաններում:

Մագիստրոսական թեզի կառուցվածքն ու ծավալը: Մագիստրոսական թեզը ներկայացված է 95 համակարգչային էջի վրա, բաղկացած է ներածությունից, 3 գլուխներից, հետևություններից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից, իր մեջ ներառում է 2 աղյուսակից և 6 նկարից:

Գլուխ 1. ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ԴՐՎԱԾՔԸ

1.1 Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հոգեֆիզիոլոգիական զարգացման առանձնահատկությունները, մտավոր հետամնացության դասակարգումը

1.2 Ընտանիքի դերը մտավոր հետամնացություն ունեցող երեխաների դաստիարակության գործում

1.3 Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ընտանեկան դաստիարակության ժամանակակից պահանջները

Գլուխ 2. ՄՏԱՎՈՐ ՀԵՏԱՄՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

2.1 Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ընտանիքների հետ իրականացվող աշխատանքների բնութագիրը

2.2 Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնողների հետ իրականացվող աշխատանքների մանկավարժական մոտեցումները

2.3 Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնողների հետ

իրականացվող մանկավարժական աշխատանքների նպատակներն ու խնդիրները

Գլուխ 3. ՄՏԱՎՈՐ ՀԵՏԱՄՆԱՑՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

3.1 Հետազոտության կազմակերպում

3.2 Փորձարարական հետազոտության միջոցների և մեթոդների նկարագրություն

3.3 Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնողների հետ իրականացվող մանկավարժական աշխատանքների հետազոտության արդյունքների վերլուծություն

Մեր կողմից կազմակերպված հետազոտությունը անցկացվել է 2 հաստատություններում՝ Երևանի թիվ 6 թերի մտավոր զարգացում ունեցող երեխաների հատուկ (օժանդակ) դպրոցում և Վաղարշապատի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 2 հատուկ (օժանդակ) դպրոցում:

Երևանի թիվ 6 թերի մտավոր զարգացում ունեցող երեխաների հատուկ (օժանդակ) դպրոցում կազմակերպված հետազոտության մեջ ընդգրկվել է 9 ծնող, իսկ Վաղարշապատի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 2 հատուկ (օժանդակ) դպրոցում՝ 18 ծնող, որոնք ունեին թեթև աստիճանի մտավոր խանգարումներ ունեցող երեխաներ:

Հետազոտությանը մասնակցած 27 ծնողները ընգդրկվել են 2 խմբերում՝ փորձարարական և ստուգողական: Ստուգողական խմբում ներառված էին 14 ծնողներ, իսկ փորձարարական խմբում՝ 13 ծնողներ: Փորձարարկան խմբում ներառված ծնողների հետ իրանացրել ենք մեր կողմից մշակված աշխատանքները:

Մեր կողմից կազմակերպված և իրականացված աշխատանքի ընթացքում մենք այցելել ենք ուսումնական հաստատություններ, կազմակերպել և իրականացրել ենք հետազոտություն՝ ծնողի կողմից լրացվող անհատական հարցաթերթիկների, հարցաթերթիկ-անկետաների, հարցաշարերի, թեսթերի միջոցով, ինչպես նաև կազմակերպվել և իրականացվել են մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնողների հետ հանդիպումներ, ծնողական ժողովներ, սեմինար պարապմունքներ, կլոր սեղան-քննարկումներ, որոնց ընթացքում քննարկվել են այնպիսի թեմաներ, որոնք կապված են երեխայի ապագայի վերաբերյալ ծնողների ակնկալիքների հետ, երեխաների և ծնողների հետ իրականացվող աշխատանքների էության, դերի և նշանակության հետ: Այս փուլում մենք հանդիպելով ծնողներին՝ նրանց

ներկայացրեցինք մեր կողմից իրականացվող աշխատանքների բնույթը, նպատակը: Պարզեցինք ծնողներին հետաքրքրող մի շարք հարցեր: Ծնողներից ստացանք որոշակի տեղեկություններ իրենց մասին, իրենց ընտանիքների, երեխաների, իրենց հուզող խնդիրների և հարցերի վերաբերյալ, փորձեցինք պարզել մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնողների վերաբերմունքը երեխաների կրթության, դաստիարակության և ուսուցման վերաբերյալ, թե ովքեր են աջակցում նրանց երեխաների դաստիարակության հարցում, համագործակցում են արդյոք բազմամասնագիտական թիմի հետ (հատուկ մանկավարժ, հոգեբան, լոգոպեդ, սոցիալական աշխատող, դաստիարակ և այլն):

Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնեղների հետ անցկացված մանկավարժական աշխատանքների հետ զուգահեռ իրականացվել է նաև զրույց նշված ուսումնական հաստատությունների ուսուցիչների և դաստիարակների հետ: Նրանց կողմից տրված տեղեկությունները և խորհուրդները մեզ հնարավորություն ընձեռեցին առավել լավ պատկերացնել ծնողների հետ իրականացվող մանկավարժական աշխատանքների բնույթը, քանի որ նրանք ավելի երկար ժամանակ են ճանաչում նրանց:

Այսպիսով՝ մտավոր հետոմնացություն ունեցող երեխաների ծնողների հետ մեր կողմից կազմակերպված և իրականացված աշխատանքները իրականացվել են հետևյալ հաջորդականությամբ՝ հանդիպում ուսումնական հաստատության մանկավարժական կոլոկտիվի հետ, մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնողների հետ հանդիպան կազմակերպում, մատվոր հետամնացություն ունեցող երեխաների, նրանց ծնողների և ընտանիքների մասին ընդհանուր տեղեկությունների ստացում, ծնողների հետ սեմինար պարապմունքների, ծնողական ժողովների, կլոր սեղան-քննարկումների կազմակերպում: Իսկ որպես մեր կողմից կատարված աշխատանքների ամփոփում, մենք այցելեցինք նաև մտավոր հետամնացություն ունեցող երեխաներից մեկի ընտանիք, որպեսզի ուսումնասիրենք, թե մեր կողմից իրականացված աշխատանքները ինչպիսի արդյունավետություն են ունեցել ընտանիքում տրիող բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորման վրա:

Հետազոտությանը մասնակցել են նաև նորմալ զարգացում ունեցող երեխաների ծնողներ (10 ծնող), որոնք արտահայտել են իրենց կարծիքը մտավոր հետամնաց երեխաների և նրանց ծնողների նկատմամբ:

Հարցմանը մասնակցած ծնողների 30% -ը (3 ծնող) ոչ բավարար կարծիք է արտահայտել այս երեխաների և նրանց ծնողների նկատմամբ: Ծնողների մյուս մասն էլ արտահայտել է դրական կարծիք՝ 70 % -ը (7 ծնող) (Նկար 1):



Նկար 1. Նորմալ զարգացում ունեցող երեխաների ծնողների վերաբերմունքը մտավոր հետամնացություն ունեցող երեխաների և նրանց ծնողների նկատմամբ

Հետազոտության ընթացքում տրվել է մեկնաբանություններ մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնողների կրթության մակարդակի, մտավոր հետամնացություն ունեցող երեխա ունենալու տարիքի, զարգացման մակարդակի, ամբողջական և ոչ ամբողջական ընտանիքներ ունենալու, ընտանիքում երեխաների թվի և մի շարք այլ տվյալների վերաբերյալ, որոնք կատարվում էին ծնողների ընդհանուր տվյալների հավաքագրման նպատակով (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հետազոտվող ծնողների և ընտանիքների ընդհանուր տվյալներ

Հետազոտվող ընտանիքների ընդհանուր թիվը n=27		
Հետազոտվող ծնողներից բարձրագույն կրթություն ունեին՝	n 9	% 33
Ծնողների երեխա ունենալու տարիքը՝ 20-25 26-38 38-45	 8 13 6	 30 48 22
• Մտավոր հետամնացություն ունեցող ծնողներ • Ցածր սոցիալական և խոցելի խավի ներկայացուցիչներ	7 12	26 44

• Նորմալ զարգացում ունեցող ծնողներ	8	30
▪ Ամբողջական ընտանիք ▪ Ոչ ամբողջական ընտանիք	11 16	41 59
Յուրաքանչյուր ընտանիքում երեխաների ընդհանուր քանակը՝ 11 ընտանիք – 2 երեխա 9 ընտանիք – 3 երեխա 7 ընտանիք – 4 երեխա	 11 9 7	 41 26 33

Իսկ այժմ ներկայացնենք փորձարարական և ստուգողական խմբերում ընդգրկված մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնողների հետ իրականացված մանկավարժական գիտափորձից ստացված տվյալների համեմատական վերլուծությունը:

Ինչպես գիտենք մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնողների մեծ մասը մտավոր հետամնացություն ունեցող երեխայի հետագա զբաղվածության վերաբերյալ ունեն բացասական կարծիք, մտածում են որ այս երեխաները հետագայում չեն կարող զբաղվել որևէ գործունեությամբ, հասարակության մեջ չեն կարող դրսևորվել որպես լիարժեք անդամներ: Այս ամենն էլ հաշվի առնելով՝ մենք ծնողների հետ իրականացրած աշխատանքների ընթացքում՝ կլոր սեղան-քննարկումների, սեմինար պարապմունքների ժամանակ, ծնողների հետ քննարկել ենք մտավոր հետամնացություն ունեցող երեխաների զարգացման առանձնահատկությունների, նրանց կարողությունների և հմտությունների, հետագա զբաղվածության՝ դպրոցն ավարտելուց հետո որևէ արհեստով զբաղվելու հետ կապված մի շարք հարցեր, քննարկել ենք նաև ծնողների և ընտանիքի դերը երեխայի անհատի ձևավորման, որպես հասարակության լիարժեք անդամի կայացման գործընթացում:

Մեր կողմից իրականացված մանկավարժական աշխատանքների արդյունքում փորձարարական խմբում ընդգրկված մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնողների 77%-ը (10 ծնող) երեխայի հետագա զբաղվածության վերաբերյալ արտահայտել է դրական կարծիք, կարծում է, որ իրենց երեխան հետագայում կզբաղվի որոշակի արհեստով և իրենք էլ կնպաստեն դրա կայացմանը: Իսկ 3 ծնող (23%) երեխայի հետագա զբաղվածության վերաբերյալ հեռանկարներ չուներ և արտահայտում էր այն կարծիքը, որ չի տեսնում երեխայի ապագան Հայաստանի Հանրապետությունում: Ստուգողական խմբում ներառված մտավոր

հետամնացություն ունեցող երեխաների ծնողների մոտ դիտվել են այլ արդյունքներ՝ ծնողներից 5-ը (36%) արտահայտել էր դրական վերաբերմունք երեխայի ապագա զբաղվածության նկատմամբ, իսկ 9-ը ծնող (64%) արտահայտել էր բացասական կարծիք, նշելով, որ մտավոր հետամնացություն ունեցող երեխան դպրոցն ավարտելուց հետո չի կարողանա զբաղվել որոշակի արհեստով և գործունեությամբ (Նկար 2):





Նկար 2. Փորձարարակա և ստուգողական խմբերի մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնողների վերաբերմունքը երեխայի հետագա զբաղվածության նկատմամբ գիտափորձի տարբեր փուլերում

Հետազոտության մեջ ընդգրկված ծնողների մեծ մասը նշել էր, որ ընտանիքի անդամները մտավոր հետամնացություն ունեցող երեխայի նկատմամբ ունի բացասական վերաբերմունք, հաշվի չի առնում երեխայի զարգացման խանգարումը, նրա մոտ դրսևորվող առանձնահատկությունները, երեխայի նկատմամբ ցուցաբերում է մեծ պահանջկոտություն, երեխայի նկատմամբ չունեն մեծ ակնկալիքներ և մասնակից չեն լինում երեխայի դստիարակության, ուսուցման գործընթացներին: Ուստի մեր կողմից կազմակերպված զրույցների, քննարկումների ընթացքում մենք ներկայացրել ենք մտավոր հետամնացություն ունեցող երեխաների զարգացման առանձնահատկությունները, նրանց հետ իրականացվող աշխատանքների բովանդակությունը և նշանակությունը, ընտանքի դերը երեխայի

զարգացման, դաստիարակության, կրթության, սոցիալիզացիայի, վերականգման գործընթացներում, ընտանիքում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտի ազդեցությունը մտավոր հետամնացություն ունեցող երեխայի հուզակամային և վարքային ոլորտների ձևավորման վրա, ինչպես նաև ծնողների ճիշտ փոխհարաբերությունների, ընտանիքի անդամների փոխհամաձայնեցված գործունեության դերն ու նշանակությունը երեխայի ճիշտ դաստիարակության, ինչպես նաև դրսևորվող խնդրի հաղթահարման շուրջ իրականացվող աշխատանքներում:

Մեր կողմից իրականացված աշխատանքների արդյունքում փորձարարական խմբում ընդգրկված ծնողների 85%-ը (11 ծնող) նշեց, որ ընտանիքի անդամները լավ են վերաբերվում մտավոր հետամնացություն ունեցող երեխային, ըմբռնումով են մոտենում նրա խնդիրներին, օգնում և քաջալերում են նրան և երեխայի հետ կապված ունեն մեծ ակնկալիքներ, մասնակցություն են ունենում երեխայի հետ իրականացվող աշխատանքներին, երեխայի դաստիարակության, ուսուցման, սոցիալականացման, վերականգման գործընթացներին: Իսկ ծնողների մյուս մասը 15%-ը (2 ծնող) ընդհակառակը, նշեց, որ երեխայի նկատմամբ ընտանիքը ցուցաբերում էր մեծ պահանջկոտություն՝ հաշվի չառնելով երեխայի զարգացման առանձնահատկությունները, նրա մոտ ձևավորված կարողությունների և հմտությունների մակարդակը և չի ընդունում երեխային այնպիսին, ինչպիսին նա կա:

Ստուգողական խմբում ներառված ծնողների հետ իրականացված հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց հետևյալ տոկոսային հարաբերությունները՝ ծնողների 57%-ը (8 ծնող), նշում էր, որ ընտանիքը ընդունում է երեխային, այնպիսին ինչպիսին նա կա՝ հաշվի առնելով մտավոր հետամնացություն ունեցող երեխայի մոտ դրսևորվող խնդիրները, զարգացման առանձնահատկությունները, կարողությունների և հմտությունների մակարդակը, մասնակցություն է ունենում երեխայի դաստրարակության և կրթության գործընթացներին՝ նպաստելով երեխայի մոտ դրսևորվող խնդրի հաղթահարմանը: Իսկ մյուս 43%-ը (6 ծնող) նշեց, որ ընտանիքը երեխայի նկատմամբ ցուցաբերում է մեծ պահանջկոտություն՝ հաշվի չառնելով երեխայի զարգացան առանձնահատ-կությունները, չի մասնակցում երեխայի դաստիարակության, ուսուցման գործընթացներին, ինչպես նաև խնդրի հաղթահարման շուրջ իրականացվող աշխատանքներին (Նկար 3):



Փորձարարական խումբ Ստուգողական խումբ

Նկար 3. Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հետազոտվող ընտանիքների երեխայի առանձնահատկությունների ընդունումը գիտափորձի տարբեր փուլերում

Ինչպես գիտենք, մտավոր հետամնացություն ունեցող երեխների ծնողների մեծ մասը չի համագործակցում դպրոցի մանկավարժական կոլեկտիվի հետ, ինչպես նաև դպրոցի բազմամասնագիտական թիմի ներկայացուցիչների հետ՝ հոգեբան, լոգոպեդ, սոցիալական աշխատող: Հաշվի առնելով այս հանգամանքը, մեր կողմից իրականացված աշխատանքների ընթացքում մեծ կարևորություն տվեցինք ծնողների և մանկավարժական կոլեկտիվի հետ համագործակցությանը, ներկայացրեցինք մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնողների հետ իրականացվող մանկավարժական աշխատանքների բովանդակությունը, դերը և նշանակությունը երեխայի կրթության, դաստիարակության, վերականգման, հասարակության մեծ ինտեգրման և ներառման գործընթացներում: Ծնողները մանկավարժներից են ստանում տեղեկատվություն երեխայի կրթական հաստատության պայմանների, անհատական ուսումնական պլանների, երեխայի հետ իրականացվող աշխատանքների բնույթի և բովանդակության մասին: Ծնողները ևս պետք է մանկավարժներին տեղեկություն հաղորդեն երեխայի զարգացման առանձնահատկությունների, ընտանիքում տիրող բարոյահոգեբանական մթնոլորտի, երեխայի ընտանեկան դաստիարակության մասին: Ուստի ծնողները պետք է ակտիվ մասնակցություն ունենան ծնողական ժողովներին, ծնողական հանդիպումներին, թրեյնինգներին, սեմինարներին, մանակավարժների հետ քննարկեն երեխայի դաստիարակության, ուսուցման հետ կապված իրենց հետաքրքրող հարցերը, ինչն էլ ունի արդյունավետ ազդեցություն երեխայի զարգացման, սոցիալականացման և վերականգման գործընթացներում:

Մանկավարժական գիտափորձից հետո ստացված տեղեկությունների վերլուծությունից հետո պարզեցինք, որ փորձարարական խմբի ծնողների 77 %-ը (10 ծնող) համագործակցում է դպրոցի մանկավարժական կոլեկտիվի հետ, ստանում է երեխայի առաջադիմության, երեխայի մոտ դրսևորվող խնդիրների, գիտելիքների մակարդակի, ունակությունների և կարողությունների և այլնի մասին տեղեկություններ, 3 ծնող (23%) նշել է, որ չի համագործակցում մանկավարժների հետ: Իսկ ստուգողական խմբում ծնողներից 8-ը (57%) համագործակցում է դպրոցի մանկավարժական կոլեկտիվի հետ, իսկ 7 ծնող (43%) չեն համագործակցում մանկավարժների հետ (Նկար 4):



Նկար 4. Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հետազոտվող ծնողների մանկավարժական կոլեկտիվի հետ համագործակցության աստիճանը գիտափորձի տարբեր փուլերում

Փորձարարական խմբում ներառված ծնողների հետ մենք քննարկել ենք նաև երեխա-ծնող փոխհարաբերությունների դերն ու նշանակությունը երեխայի զարգացման գործընթացում: Քննարկել են ծնողների միասնական և փոխհամաձայնեցված գործունեության արդյունավետությունը երեխայի դաստիարակության գործընթացում: Կարևորել ենք ծնողների և ընտանիքի անդամների դերը երեխայի հասարակության մեջ ինտեգրման և ներառման գործընթացներում, սոցիալականացման և վերականգման գործընթացներում: Քննարկել ենք նաև երեխայի ազատ ժամանցի անցկացման կարևորությունը ծնողների և ընտանիքի մյուս անդամների հետ: Առաջարկել ենք երեխաների հետ միասին ազատ ժամանցն անցկացնել բնության գրկում, այցելել թանգարաններ, կինոթատրոններ, թատրոններ, մանկական ժամանցի վայրեր, ինչը շատ մեծ դեր ունի հասարակության մեջ երեխայի ինտեգրման և ներառման գործընթացների արդյունավետության բարձրացման գործում:

Մեր կողմից իրականացված աշխատանքների արդյունքում էլ փորձարարական խմբի ծնողների 85%-ը (11 ծնող) նշել էր, որ լավ ծանոթ է երեխայի անձնային առանձնահատկություններին, ընդունում է նրա բոլոր ցանկությունները և ցուցաբերում է սիրալիր վերաբերմունք, ինչպես նաև ընդունում է երեխայի խնդիրը և նպաստում խնդրի հաղթահարմանը: Սիրում է ազատ ժամանակը անցկացնել երեխայի հետ: Երեխայի հետ միասին այցելել է կինոթատրոն, թանգարաններ, մանկական ժամանցի վայրեր: Իսկ ծնողների 15%-ը (2 ծնող) չի համակերպվել երեխայի խնդրի հետ, կարծում է, որ իր երեխան նման է նորմալ զարգացում ունեցող մյուս երեխաներին և բացասաբար է վերաբերվում երեխայի խնդրի հետ կապված հարցերին:

Ստուգողական խմբում դիտվեցին հետևյալ արդյունքները՝ ծնողների 57%-ը (8 ծնող) ընդունելով երեխայի մոտ առկա խնդիրը՝ նպաստում էր դրա հաղթահարման աշխատանքներին, համագործակցում է երեխայի, ինչպես նաև ընտանիքի մյուս անդամների հետ, նպաստում է հասարակության մեջ երեխայի ինտեգրմանն ու ներառմանը՝ կազմակերպելով երեխայի ազատ ժամանց բնության գրկում, մանկական խաղահրապարակներում: Իսկ ծնողների 43%-ը (6 ծնող) նշել է, որ չի սիրում իր ազատ ժամանակը անցկացնել երեխայի հետ և դրանով իսկ չի նպաստում երեխայի խնդրի հաղթահարմանը, հասարակության մեջ ներառմանն ու սոցիալականացմանը (Նկար 5):





Փորձարարական խումբ
Ստուգողական խումբ

Նկար 5. Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հետազոտվող ծնողների վերաբերմունքը երեխայի մոտ առկա խնդրին և դրա հաղթահարմանը գիտափորձի տարբեր փուլերում

Մեր կատարած հետազոտական աշխատանքի ընթացքում մենք ուսումնասիրել ենք նաև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնողների անձնային առանձնահատկությունները, հոգեվիճակը, որը բնութագրվում էր բարձր տագնապալիությամբ, ցածր ինքնագնահատականով, ագրեսիվությամբ, վախերի և տագնապների բարձր մակարդակով:

Մեր կողմից կատարված հետազոտության արդյունքում մենք եկանք այն եզրահանգմանը, որ կան ծնողներ, որոնք երեխայի մոտ առկա խնդիրները կապում են իրենց անվիարժեքության հետ և կորցնում են սեփական անձի նկատմամբ ունեցած ինքնագնահատականը: Ուստի մեր կողմից կազմակերպված հետազոտության արդյունքում մենք ուսումնասիրել ենք նաև մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնողների ինքնագնահատականը: Մեր կողմից իրականացված աշխատանքների արդյունքում վերլուծությունները ցույց տվեցին, որ փորձարարական խմբում ներառված ծնողների 62%-ը (8 ծնող) ուներ միջին մակարդակի ինքնագնահատական, իսկ 38%ը (5 ծնող)՝ ցածր ինքնագնահատական:

Այլ էին տվյալները ստուգողական խմբում և դիտվեցին հետևյալ արդյունքները՝ ծնողների 43%-ի (6 ծնող) մոտ առկա էր ցածր ինքնագնահատական, 36%-ի (5ծնող) մոտ՝ միջին մակարդակի ինքնագնահատական և 21%-ի (3 ծնող) մոտ՝ իրականությանը անհամապատասխան ինքնագնահատական (Աղյուսակ 2, Նկար 6):

Աղյուսակ 2

Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հետազոտվող ծնողների մոտ առկա ինքնագնահատականի մակարդակը գիտափորձի տարբեր փուլերում

Փորձարարական խումբ n=13				
Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնողների ինքնագնահատականի մակարդակը	**միջին մակարդակի ինքնագնահատական**		**ցածր մակարդակի ինքնագնահատական**	
	n	**%**	**n**	**%**
	8	62	5	38

Ստուգողական խումբ n=14						
Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնողների ինքնագնահատականի մակարդակը	միջին մակարդակի ինքնագնահատական		ցածր մակարդակի ինքնագնահատական		իրականությանը անհամապատասխան ինքնագնահատական	
	n	%	n	%	n	%
	5	36	6	43	3	21



Փորձարարական խումբ



Ստուգողկան խումբ

Նկար 6. Մտավոր հետամնացություն ունեցող երեխաների հետազոտվող ծնողների ինքնագնահատականի մակարդակը գիտափորձի տարբեր փուլերում

Որպես մեր կողմից կազմակերպված և իրականացրած աշխատանքների ամփոփում, մենք աշխատանքի վերջում, պատահականության սկզբունքով, այցելել ենք նաև մտավոր հետամնացություն ունեցող երեխաներից մեկի ընտանիք:

Այսպիսով՝ հետազոտության արդյունքների վերլուծությունը վկայում է, որ մեր կողմից մշակված միջոցներն ու պայմանները նպաստել են մտավոր հետամնացություն ունեցող երեխաների ծնողների հետ իրականացվող մանկավարժական աշխատանքների բարելավմանը:

Քանի որ մեր կողմից կազմված բուկլետներում ներառված են մագիստրոսական աշխատանքից բխող հետևությունները, ուստի թույլ տվեք չներկայացնել դրանք:

Շնորհակալություն ուշադրության համար